ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2019/57

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.02.2019թ. թիվ 27/26-3/1536-19 գրությամբ «Հայ Էներջի» ՓՋՑ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 30.01.2019թ. թիվ ԴՎԱ/391 գրության հիման վրա, 06.02.2019թ. «Հայ Էներջի» ՓՋՑ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.01.2019թ. թիվ ԴՎԱ/391 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Յուտեկ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության՝ կոնսորցիումի պայմանագիր «Հայ Էներջի» ՓԲՑ-ի հետ) միջև 29.05.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20/6-1 ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. հունվարի 23-ին միակողմանի լուծել է N ԳՀԱՊՁԲ-20/6-1 պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 25.01.2019թ. հրապարակվել է www.gnumner.am կայքում»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. **<u>«Հայ Էներջի» ՓԲՑ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 07.03.2019թ. գրությամբ դիմել է «Հայ Էներջի» ՓԲՑ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.02.2019թ. թիվ 27/26-3/1536-19 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

«Հայ Էներջի» ՓԲՑ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն Ընկերության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. **<u>ՍՑ-ԷՍ-2019/57 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 06.02.2019թ. թիվ 27/26-3/1536-19 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 30.01.2019թ. թիվ ԴՎԱ/391 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության և «Յուտեկ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության՝ կոնսորցիումի պայմանագիր «Հայ Էներջի» ՓՋՑ-ի հետ) միջև 29.05.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20/6-1 ծածկագրով պայմանագիրը, ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի վարչության 24.12.2018թ. պայմանագրի կատարման վերաբերյալ թիվ 1 եզրակացությունը, ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի վարչության պետի կողմից 26.12.2018թ. ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին ուղղված թիվ 13194 գրությունը, Պատվիրատուի կողմից 24.01.2019թ. «Յուտեկ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության՝ կոնսորցիումի պայմանագիր «Հայ Էներջի» ՓՋՑ-ի հետ) ուղղված թիվ ԴՎԱ/329 գրությունը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Յուտեկ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության՝ կոնսորցիումի պայմանագիր «Հայ Էներջի» ՓՋՑ-ի հետ) միջև 29.05.2018թ. կնքվել է N ԳՀԱՊՁԲ-20/6-1 ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով՝ Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:
- 2.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետը խախտվել է 30 օրից ավելի:
- 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:
- 2.1.7.1 կետի «ա» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտել էական է համարվում, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

• 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

• 8.10 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, նույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

• N ԳՀԱՊՁԲ-20/6-1 ծածկագրով գնման պայմանագրի տեխնիկական բնութագիր թիվ 1 հավելվածով սահմանվել է մատակակարվող ապրանքի հետևյալ հատկանիշները.

- Քողարկման ծածկեր՝ ռազմական նշանակության, ծածկույթի ընդհանուր մասկերեսը՝ 216քմ, անտառային կամ տափաստանային երանգների, հիմքերը 5 x 5սմ վանդակներով, քողարկիչ նյութը ինքնահանգչող կապրոնային, լրակազմը ներառում է միացման քուղ՝ մեկ հատ հիմնական և երկու հատ պահեստային, (յուրաքանչյուրը՝ 28մ երկարության և 0.5-0.7 սմ հաստության), մետաղական հենակ-կանգնակ՝ 4 հատ (յուրաքանչյուրը՝ 208սմ երկարության և ոչ պակաս 3.6սմ հաստության), ցցեր մետաղական՝ 24 հատ (ոչ պակաս 26սմ երկարության և 0.8սմ հաստության) փաթեթավորված կտորե պատյանի մեջ, տեղափոխման համար՝ 2 հատ բրեզետնյա կամ նմանատիպ պարկ՝ յուրաքանչյուրում 6 հատ 3 x 6մ չափերով կտորներ, օգտագործման ջերմաստիճանային տիրույթը՝ -400C+400C:

• N ԳՀԱՊՁԲ-20/6-1 ծածկագրով պայմանագրի գնման ժամանակացույց թիվ 1 հավելվածի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2018թ. 3-րդ եռամսյակում մատակարարել թվով 200 լրակազմ քողարկման ծածկեր:

ՀՀ ՋՈՒ ինժեներական զորքերի վարչության պայմանագրի կատարման վերաբերյալ 24.12.2018թ. թիվ 1 եզրակացությամբ արձանագրվել է հետևյալը.

«Մատակարարված ապրանքը չի համապատասխանում տեխնիկական բնութագրի պահանջներին.

- քողարկման ցանցի քողարկիչ ծածկույթը այրվում է բաց կրակով՝ ինքնահանգչող չէ,

- քողարկման ծածկույթի հիմքը առանձին է և միացված չէ քաղարկիչ ծածկույթին կապրոնե ամրակներով,

- քողարկման ծածկույթի նյութը հեշտությամբ պատռվում է:

Փաստացի «Յուտեկ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության՝ կոնսորցիումի պայմանագիր «Հայ Էներջի» ՓՋՑ-ի հետ) կողմից 200 լրակազմ քողարկման ծածկեր մատակարարվել են 21.12.2018թ., մինչդեռ ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի պետք է մատակարարվեր 30.10.2018թ.:

Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ բացասական եզրակացություն:»:

ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի վարչության պետը 26.12.2018թ. թիվ 13194 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի վարչության կարիքների համար N ԳՀԱՊՁԲ-20/6-1 առ 29.05.2018թ. պայմանագրի շրջանակում «Յուտեկ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության՝ կոնսորցիումի պայմանագիր «Հայ Էներջի» ՓՋՑ-ի հետ) կողմից 21.12.2018թ. ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի վարչության կենտրոնական պահեստ տրվել և չի մուտքագրվել 200 լրակազմ քողարկման ծածկ:

Հաշվի առնելով ֆինանսական տարվա ավարտը և ժամանակի սղությունը 24.12.2018թ. Ձեզ է ուղարկվել վճարման փաստաթղթերը, որից հետո մասնագիտական խորն ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ առկա են մի շարք անհամապատասխանություններ՝ պայմանագրի տեխնիկական բնութագրի հետ:

Միաժամանակ հաշվի առնելով վերոնշյալ պայմանագրի 2.1.7 և 2.1.7.1 կետերը միակողմանի լուծել պայմանագիրը՝ կիրառելով պայմանագրի 6.2 կետով սահմանված տույժը՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0.05 տոկոսի չափով (ուշացումը կազմել է հիսուներկու օր) և 6.3 կետով սահմանված տուգանքը՝ տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու համար 0.05 տոկոսի չափով:»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 24.01.2019թ. թիվ ԴՎԱ/329 գրությամբ «Յուտեկ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության՝ կոնսորցիումի պայմանագիր «Հայ Էներջի» ՓՋՑ-ի հետ) հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Յուտեկ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության՝ կոնսորցիումի պայմանագիր «Հայ Էներջի» ՓՋՑ-ի հետ) միջև 29.05.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20/6-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ նաև Պայմանագիր) շրջանակներում Ձեր Ընկերությունը պետք է մատակարարեր 200 լրակազմ քողարկման ծածկեր, սակայն մատակարարել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. հունվարի 23-ին միակողմանի լուծում է N ԳՀԱՊՁԲ-20/6-1 ծածկագրով պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Յուտեկ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության՝ կոնսորցիումի պայմանագիր «Հայ Էներջի» ՓՋՑ-ի հետ) պարտավոր է նույն ծանուցումը սանալուց հետո հինգ բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 1.747.200 ՀՀ դրամ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, և 336.000 ՀՀ դրամ տուգանք՝ Պայմանագրի 6.3 կետի համաձայն:»:

Միաժամանակ ՀՀ պաշտպանության նախարարությունը N ԳՀԱՊՁԲ-20/6-1 ծածկագրով գնման պայմանագիրը լուծելու մասին հայտարարությունը 25.01.2019թ. հրապարակել է www.procurement.am կայքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

• ՀՀ պաշտպանության նախարարության և «Յուտեկ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության՝ կոնսորցիումի պայմանագիր «Հայ Էներջի» ՓՁՑ-ի հետ) միջև 29.05.2018թ. կնքվել է N ԳՀԱՊՁԲ-20/6-1 ծածկագրով պայմանագիր:

• N ԳՀԱՊՁԲ-20/6-1 ծածկագրով գնման պայմանագրի տեխնիկական բնութագիր թիվ 1 հավելվածով սահմանվել է մատակարարվող ապրանքի հետևյալ հատկանիշները.

Քողարկման ծածկեր՝ ռազմական նշանակության, ծածկույթի ընդհանուր մակերեսը՝ 216քմ, անտառային կամ տափաստանային երանգների, հիմքերը 5 x 5սմ վանդակներով, քողարկիչ նյութը ինքնահանգչող կապրոնային, լրակազմը ներառում է միացման քուղ՝ մեկ հատ հիմնական և երկու հատ պահեստային, (յուրաքանչյուրը՝ 28մ երկարության և 0.5-0.7

սմ հաստության), մետաղական հենակ-կանգնակ՝ 4 հատ (յուրաքանչյուրը՝ 208սմ երկարության և ոչ պակաս 3.6սմ հաստության), ցցեր մետաղական՝ 24 հատ (ոչ պակաս 26սմ երկարության և 0.8սմ հաստության) փաթեթավորված կտորե պատյանի մեջ, տեղափոխման համար՝ 2 հատ բրեզետնյա կամ նմանատիպ պարկ՝ յուրաքանչյուրում 6 հատ 3 x 6մ չափերով կտորներ, օգտագործման ջերմաստիճանային տիրույթը՝ -400C +400C:

- N ԳՀԱՊՁԲ-20/6-1 ծածկագրով պայմանագրի գնման ժամանակացույց թիվ 1 հավելվածի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2018թ. 3-րդ եռամսյակում մատակարարել թվով 200 լրակազմ քողարկման ծածկեր:
- «Յուտեկ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության՝ կոնսորցիումի պայմանագիր «Հայ Էներջի» ՓՁՑ-ի հետ) կողմից մատակարարվել է տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք:
- ՀՀ պաշտպանության նախարարությունը 23.01.2019թ. միակողմանի լուծել է ԳՀԱՊՁԲ-20/6-1 ծածկագրով գնման պայմանագիրը:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Յուտեկ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության՝ կոնսորցիումի պայմանագիր «Հայ Էներջի» ՓՁՑ-ի հետ) մատակարարելով տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝ խախտել է 29.05.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20/6-1 ծածկագրով պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Հայ Էներջի» ՓՁՑ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.02.2019թ. թիվ 27/26-3/1536-19 գրությամբ «Հայ Էներջի» ՓՁՑ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Հայ Էներջի» ՓՁՑ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ